ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ - ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

N 20-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՐԹԱՊԱՀ ՄԱՍԵՐԻ ԵՎ ՀԵՐԹԱՊԱՀ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2023 թվականի մարտի 14-ի թիվ 4-Լ հրամանով հաստատված հավելվածի 19-րդ կետի 5-րդ ենթակետի.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ստորաբաժանումների հերթապահ մասերի և հերթապահ ծառայությունների գործունեության կազմակերպման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության հերթապահ մասերին ներկայացվող պահանջները՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Իրենց կազմում հերթապահ մաս կամ հերթապահ ծառայություն ունեցող Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ստորաբաժանումների պետերին՝ երկամսյա ժամկետում ապահովել հերթապահ մասերի և հերթապահ ծառայողների սույն հրամանի 1-ին կետով հաստատված կարգի վերաբերյալ գիտելիքների իմացության ստուգարքի ընդունում՝ արդյունքների մասին տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչություն:

3. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության պետ, ոստիկանության պետի տեղակալին՝ կազմակերպել սույն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի մատյանների և ձևաթղթերի տպագրությունը Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության տպարանում:

4. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության իրավասու ծառայողներին ու աշխատողներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ***Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

«15» 11 2024թ.

ք.Երևան

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության ներքին
գործերի նախարարության ոստիկանության
պետ-ներքին գործերի նախարարի տեղակալի
« 15 » 11. 2024թ.
Թիվ 20 -Լ հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՐԹԱՊԱՀ ՄԱՍԵՐԻ ԵՎ ՀԵՐԹԱՊԱՀ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանության) ստորաբաժանումների կազմում գործող հերթապահ մասերի և հերթապահ ծառայությունների գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Հերթապահ մասը ոստիկանության ստորաբաժանումների կազմում գործող կառուցվածքային միավոր է:

3. Հերթապահ մասերի ծառայողներն իրենց գործառույթներն իրականացնելիս ղեկավարվում են «Ոստիկանության մասին» և «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 1495-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի N 574-Ն որոշումներով, սույն կարգով, ոստիկանության պետի կողմից հաստատված տվյալ պաշտոնի անձնագրով և այլ իրավական ակտերով:

4. Ոստիկանության հերթապահ մասի գործունեության նպատակները և խնդիրներն են.

1) հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումների (այսուհետ՝ հաղորդումներ) շուրջօրյա ընդունումը, գրանցումը, հաշվառումը, դրանց անհապաղ արձագանքումը, օպերատիվ հաղորդագրությունների կազմումը և սահմանված ժամկետում ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն (օպերատիվ կառավարման կենտրոնի մարզային ստորաբաժանումներ) հաղորդումը,

2) սպասարկվող վարչական տարածքում արձանագրված ծանր, առանձնապես ծանր և հնչեղություն ունեցող հանցագործությունների, պատահարների, ինչպես նաև հասարակական, քաղաքական միջոցառումների վերաբերյալ տեղեկություններ ստանալու դեպքում անհապաղ տեղյակ պահել վերադաս հերթապահ մաս և ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն՝ դեպքի կամ պատահարի վայր պարեկային ծառայության կարգախումբ ուղարկելու, ինչպես նաև ընդհանուր մշտադիտարկման, առանձին տարածքների և օբյեկտների հետազոտման համար, զանգվածային միջոցառումների ընթացքում անօդաչու թռչող ու այլ սարքեր և սարքավորումներ կիրառելու նպատակով,

3) սպասարկվող վարչական տարածքում հասարակական կարգի պահպանությանը և հասարակական անվտանգության ապահովմանը մասնակցող ոստիկանության ուժերի և միջոցների օպերատիվ կառավարման օժանդակումը և համակարգումը,

4) «տաք հետքերով» հանցագործությունների բացահայտման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների կազմակերպումը և համակարգումը,

5) հաղորդումների հիման վրա դեպքի վայր օպերատիվ խմբի մեկնման կազմակերպումը,

6) սահմանված կարգով հատուկ միջոցառումների պլանների գործարկումը և անձնակազմի հավաքի կազմակերպումը,

7) բերված և ձերբակալված անձանց հետ պարզաբանման իրականացումը,

8) ձերբակալված և կալանավորված անձանց պահելու՝ օրենսդրությամբ սահմանված կարգի պահպանման նկատմամբ իր իրավասության սահմաններում հսկողությունը,

9) ոստիկանության ստորաբաժանմանն ամրակցված զենքի, ռազմամթերքի, հատուկ և այլ տեխնիկական միջոցների, ինչպես նաև հատուկ միջոցառումների պլանների և գաղտնի փաստաթղթերի պահպանումը:

5. Հանցագործության մասին հաղորդումը ոստիկանության տարածքային ստորաբաժանումներում սահմանված կարգով գրանցվելուց հետո, 3 ժամվա ընթացքում, օպերատիվ հաղորդագրությունով հաղորդվում է ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն:

6. Հերթապահ մասի աշխատանքը գնահատվում է հետևյալ չափորոշիչներով.

1) օրինականության պահպանմամբ,

2) հերթափոխի կողմից օրենքների, ծառայությունը կանոնակարգող իրավական ակտերի, օպերատիվ իրադրության, իրեն վերապահված գործառույթների պատշաճ իմացությամբ,

3) «տաք հետքերով» հանցագործությունների բացահայտման կազմակերպման օպերատիվությամբ,

4) հասարակական կարգի պահպանությանը և հասարակական անվտանգության ապահովմանը մասնակցող ուժերի և միջոցների օպերատիվ կառավարման օժանդակման ու համակարգման արդյունավետությամբ,

5) տեղեկատվության ընդունման, ամփոփման և հաղորդման որակով,

6) ստացված հաղորդումների պատշաճ կարգով ընդունման, հաշվառման, օպերատիվ հաղորդագրությունների ժամանակին կազմման, ամփոփման և զեկուցման որակով,

7) բերված և ձերբակալված անձանց հետ պարզաբանման աշխատանքների որակով,

8) ձերբակալվածներին և կալանավորվածներին ձերբակալվածների պահման վայրում պահելու սահմանված կարգի պահպանմամբ,

9) քաղաքացիների և ծառայողների հետ շփումներում բարեվարքության և էթիկայի կանոնների պահպանմամբ,

10) ծառայողական սենյակների, հերթապահ մասին ամրակցված գույքի և տրանսպորտային միջոցների պահպանման վիճակով, ինչպես նաև հերթափոխի ծառայողների կոկիկ ու պատշաճ տեսքով:

7. Հերթապահ մասերի գործունեության կազմակերպական-մեթոդական ապահովումը և ղեկավարումն իրականացվում է ոստիկանության վերադաս կառուցվածքային ստորաբաժանման, իսկ էլեկտրոնային գրանցամատյանի վարման և օպերատիվ ամփոփագրերի մասով՝ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի կողմից:

8. Սույն կարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) Հերթափոխ՝ հերթապահ մասի կամ հերթապահ ծառայության հաստիքային միավոր, որը սույն կարգի համաձայն խմբով կամ միայնակ իրականացնում է շուրջօրյա ծառայություն: Միայնակ շուրջօրյա ծառայություն իրականացնող ծառայողին հանգստի և սնունդ ընդունելու

ժամանակ փոխարինում է բաժնի փորձառու ծառայողներից մեկը,

2) Ձերբակալվածներին պահելու վայրի (այսուհետ՝ ՁՊՎ) ոստիկան՝ ձերբակալվածներին պահելու վայրում շուրջօրյա ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայող,

3) Ձերբակալված անձ՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով արգելանքի վերցված անձ,

4) *Բերված անձ՝* վարչական իրավախախտում կատարելու համար ոստիկանության ստորաբաժանման հերթապահ մաս բերված, ինչպես նաև վարչական կարգով ձերբակալված անձ,

5) Բերված կամ ձերբակալված անձանց պահման խցեր՝ ոստիկանության ստորաբաժանման հերթապահ մասում առանձնացված, սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխանող խցեր (առնվազն 2)՝ տեղակայված հերթափոխի համար տեսանելի վայրում, որտեղ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում պահվում են բերված և (կամ) ձերբակալված անձինք,

6) Օպերատիվ խումբ՝ ստորաբաժանման պետի կողմից նախապես հաստատված գրաֆիկի ոստիկանության տարածքային ստորաբաժանման ծառայողներից բաղկացած խումբ, որն ապահովում է հաղորդումներին օպերատիվ արձագանքման գործընթացը: Օպերատիվ խումբը զինվում է հաշվեցուցակային զենքերով,

7) *Օպերատիվ խմբի ղեկավար՝* օպերատիվ խմբում ընդգրկված ծառայող, ով ղեկավարում և համակարգում է տվյալ օրվա օպերատիվ խմբի աշխատանքները դեպքի վայրում կամ հաղորդման հետ կապված այլ աշխատանքները, կատարում է օրենսդրությամբ սահմանված, ինչպես նաև բաժնի պետի կողմից տրված այլ հանձնարարականներ,

8) *Օպերատիվ խմբի ավագ՝* օպերատիվ խմբում ընդգրկված ծառայող, ով դեպքի վայրում (օպերատիվ խմբի ղեկավարի բացակայության դեպքում) այլ ծառայողների նկատմամբ ունի ավելի բարձր պաշտոն կամ կոչում,

9) Իրավասու վերադաս ստորաբաժանում՝ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության (այսուհետ՝ ՀՈԳՎ) ենթակա ստորաբաժանումների դեպքում՝ ՀՈԳՎ, ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության (այսուհետ՝ ՔՈԳՎ) ենթակա ստորաբաժանումների դեպքում՝ ՔՈԳՎ:

10) Վերադաս հերթապահ մաս՝ ոստիկանության ՀՈԳՎ հերթապահ ծառայության վարչության հերթապահ մաս (այսուհետ՝ ՀԾՎ ՀՄ):

2. ՀԵՐԹԱՊԱՀ ՄԱՍԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

9. ՀԾՎ ՀՄ աշխատանքը ղեկավարում է հերթապահ մասի պետը, իսկ տարածքային ստորաբաժանումներում՝ բաժնի պետը կամ իրավասու տեղակալը, ով՝

1) կազմակերպում և համակարգում է հերթապահ մասի գործունեությունը,

2) ոչ ուշ, քան մինչև նախորդ ամսվա 28-ը կազմում և պետի հաստատմանն է ներկայացնում հերթափոխի ամենամսյա գրաֆիկը,

3) աշխատանքներ է տանում անձնակազմի ընտրության ուղղությամբ, միջոցներ է ձեռնարկում ենթակա ծառայողների մասնագիտական պատրաստականության, կատարողական և ծառայողական կարգապահության բարձրացման ուղղությամբ,

4) հետևում է հերթապահ մասի ծառայողների գործառույթների պատշաճ իրականացմանը,

5) վերլուծում է հերթապահ մասի աշխատանքը, այդ թվում՝ «տաք հետքերով» հանցագործությունների բացահայտմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը,

6) վերահսկում է օպերատիվ հաղորդագրությունները սահմանված ժամկետում օպերատիվ կառավարման կենտրոնին տրամադրելու գործընթացը,

7) առաջարկություններ է ներկայացնում հերթապահ մասը գույքով, համակարգչային տեխնիկայով, կապի և տրանսպորտային միջոցներով և սպառազինությամբ ապահովելու վերաբերյալ,

8) ՀՈԳՎ հերթապահ ծառայության վարչության ղեկավարությանն առաջարկություններ է ներկայացնում հերթապահ մասի գործունեության արդիականացման և բարելավման ուղղությամբ,

9) միջնորդում է հասարակական կարգի պահպանության և իրավախախտումների դեմ պայքարի ուղղությամբ պարտականությունները բարեխղճորեն կատարած հերթապահ մասի և օպերատիվ խմբի կազմում ընդգրկված ծառայողներին խրախուսելու, իսկ ծառայության նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունք ցուցաբերելու դեպքում՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար:

10. Հերթապահ մասի հաստիքային ծառայողների բացակայության դեպքում (թափուր, արձակուրդ, հիվանդ և այլ) ոստիկանության ստորաբաժանման պետի հրամանով հերթափոխի կազմում ծառայության են ներգրավվում ստորաբաժանման փորձառու ծառայողները:

3. ՀԵՐԹԱՓՈԽԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

11. Ծառայությունն ընդունող հերթափոխը հանձնող հերթափոխից, ըստ ցուցակի, ստուգում և ընդունում է.

1) ծառայողական փաստաթղթերը և իրավական ակտերը *(Ձև 10)*,

2) սպառազինությունը, գույքը և տեխնիկական միջոցները,

3) հատուկ միջոցառումների պլանները, գաղտնի փաստաթղթերը, զենք, ռազմամթերք և այլ գույք պարունակող պահարանները՝ կնիքված վիճակում: Նշված պահարանները անհրաժեշտության դեպքում բացվելու պարագայում կնիքվում են պատասխանատու անձի կնիքով:

12. Ծառայությունը հանձնող հերթափոխն ընդունող հերթափոխին իրազեկում է նախորդ օրվա օպերատիվ իրավիճակի և ստորաբաժանման ղեկավարության կողմից տրված հանձնարարականների ու դրանց կատարման ուղղությամբ իրականացված միջոցառումների մասին:

13. Ծառայությունն ընդունող հերթափոխը հերթապահության ընդունման-հանձնման ժամանակ պարտավոր է.

1) ստուգել ՁՊՎ պահպանության վիճակը, մանրազնին կերպով ստուգել խցերը և ՁՊՎ մյուս սենյակները, համոզվել սարքավորումների, կապի, ազդանշանային, հրշեջ միջոցների սարքինության մեջ,

2) ստուգել ՁՊՎ-ում պահվող անձանց առկայությունը,

3) ստուգել ՁՊՎ-ում անձանց պահման հիմքերը և հետևել նրանց արգելանքի տակ պահման ժամկետներին:

14. Ծառայության անցնող հերթափոխի ավագը հայտնաբերված բոլոր թերությունների մասին գրառումներ է կատարում հերթապահության ընդունման և հանձնման մատյանում

(Զև 1) և հանձնող հերթափոխի հետ համատեղ միջոցներ է ձեռնարկում դրանք վերացնելու ուղղությամբ:

15. ՀԾՎ ՀՄ հերթապահության ընդունում-հանձնումը կազմակերպում է հերթապահ մասի պետը, իսկ տարածքային ստորաբաժանումներում՝ ստորաբաժանման պետը կամ իրավասու տեղակալը՝ ժամը 08:00-ից 10:00-ն ընկած ժամանակահատվածում: Հերթապահության ընդունման-հանձնման մասին հերթափոխերի ավագները զեկուցում են ոստիկանության ստորաբաժանման պետին:

16. Իրենց հաստիքացանկում հերթապահ մասեր չունեցող ստորաբաժանումների հերթապահ ծառայությունների հերթապահության ընդունում-հանձնումը կազմակերպում են ստորաբաժանումների պետերը կամ իրավասու տեղակալը: Ոչ աշխատանքային օրերին հերթապահության ընդունման-հանձնման կազմակերպումը և հերթափոխի հրահանգավորումը կատարում է օպերատիվ խմբի ղեկավարը:

17. Հերթապահության ընդունման-հանձնման մասին զեկույցից հետո ոստիկանության ստորաբաժանման պետը գնահատում է հանձնող հերթափոխի աշխատանքը և հերթապահությունն ընդունող հերթափոխի ավագին տալիս է անհրաժեշտ ցուցումներ:

18. Ղեկավարին զեկուցելուց հետո հերթապահ մասի աշխատանքի ողջ պատասխանատվությունը ստանձնում է ընդունող հերթափոխը:

19. Հերթափոխը ծառայությունը կատարում է ամենօրյա, իսկ տոնական օրերին՝ այդ օրվա համար սահմանված համազգեստով:

20. Հերթափոխը զինվում է հաշվեցուցակային զենքերով, իսկ բացառիկ դեպքերում, համապատասխան ցուցումով՝ ինքնաձիգերով:

21. Յուրաքանչյուր հերթափոխի աշխատանքի տևողությունը 24 ժամ է: Հերթապահության ժամանակ ծառայողներին հերթականությամբ տրվում է ընդմիջում՝ սնվելու և կարճատև հանգստի համար, յուրաքանչյուրին 4 ժամ ընդհանուր տևողությամբ՝ ելնելով ծանրաբեռնվածության աստիճանից: Հերթապահության ավարտից հետո հերթապահ մասի հաստիքային ծառայողներին, ինչպես նաև նրանց մեկ հերթափոխից ավել փոխարինող այլ ծառայություններից ներգրավված ծառայողներին տրվում է հանգիստ 72 ժամ, իսկ մեկ անգամ հերթապահած այլ ծառայողներին՝ 24 ժամ: Արտակարգ իրավիճակների դեպքերում սնվելու և հանգստի համար տրվող ժամերը կարող են սահմանափակվել ստորաբաժանման ղեկավարի ցուցումով:

22. Հերթափոխը պարտավոր է մշտապես գտնվել հերթապահ մասում, բացառությամբ՝ սույն կարգով նախատեսված դեպքերի:

23. Հերթափոխի ավագին և մյուս ծառայողներին կարող են այդ օրվա ծառայությունից ազատել ոստիկանության պետը, նրա տեղակալները, ոստիկանության ՀՈԳՎ ՀԾՎ պետը և տվյալ տարածքային ստորաբաժանման պետը:

24. Հերթափոխին արգելվում է ոչ ծառայողական նպատակներով օգտագործել հերթապահ մասի ավտոտրանսպորտն ու այլ գույքը, կապի միջոցները և համակարգչային տեխնիկան:

25. Հերթափոխի ծառայողները, հերթապահ մաս ստացված հեռախոսազանգերին պատասխանելիս, պարտավոր են ներկայանալ՝ նշելով ստորաբաժանման անվանումը, պաշտոնը և ազգանունը:

4. ՀԾՎ ՀՄ ՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ-ՕՊԵՐԱՏԻՎ ՀԵՐԹԱՊԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

26. Հերթապահ մասի պետի օգնական-օպերատիվ հերթապահը լիազորված է.

1) իր իրավասության սահմաններում կազմակերպական-մեթոդական կարգադրություններ տալ ենթակա տարածքային ստորաբաժանումների հերթապահ մասերին, ինչպես նաև նրանց փոխանցել վերադաս ստորաբաժանման կողմից տրված հանձնարարականները,

2) օգտվել նաև սույն կարգի 27-րդ կետում նշված լիազորություններից՝ կարգով սահմանված այլ գործառույթներից և պարտականություններից:

5. ԱՎԱԳ ՏԵՍՈՒՉ-ՀԵՐԹԱՊԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

27. Ավագ տեսուչ-հերթապահը լիազորված է.

1) իր իրավասության սահմաններում կարգադրություններ տալ հերթափոխին,

2) օպերատիվ իրադրության բարդացման դեպքում՝ օպերատիվ խմբի ղեկավարի հանձնարարությամբ, ժամանակավոր փոփոխություններ է կատարում ուժերի և միջոցների տեղաբաշխման հաշվարկում,

3) դեպքի վայրի պահպանության, «տաք հետքերով» հանցագործներին հետապնդելու և ձերբակալելու անհրաժեշտություն առաջանալիս օգտագործել ստորաբաժանման կողմից սպասարկվող վարչական տարածքում ներգրավված ոստիկանության այլ ուժերին, իսկ պարեկային ծառայողների կարգախմբերի անհրաժեշտության դեպքում՝ համագործակցել ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի հետ,

4) սահմանված կարգով գործողության մեջ դնել օպերատիվ հատուկ պլանները, «Տագնապ» ազդանշանով հայտարարել ստորաբաժանման անձնակազմի կամ առանձին ստորաբաժանումների (ծառայողների) հավաք,

5) հերթապահ օպերատիվ խմբին տալ դեպքի վայր մեկնելու մասին ցուցումներ,

6) օպերատիվ խմբի ղեկավարից ստանալ տեղեկություններ դեպքի վայրում կատարված աշխատանքների ընթացքի, ինչպես նաև արդյունքների մասին,

7) ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից կամ ներգերատեսչական համակարգչային ցանցով ավտոմատացված տեղեկատվական համակարգից ստանալ հանցագործությունների բացահայտման և հետախուզման աշխատանքների համար անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական ու տեղեկատվական տվյալներ,

8) անձնակազմից պահանջել կարգապահության, զենքի և հատուկ միջոցների հետ վարվելու, համազգեստի ճիշտ կրման, հրշեջ անվտանգության և սանիտարահիգիենիկ կանոնների պահպանում,

9) այլ ստորաբաժանումների իրավասու ծառայողներից ստանալ հերթապահ մասի վրա դրված խնդիրների կատարման համար անհրաժեշտ տեղեկատվություն,

10) օպերատիվ իրադրության բարդացման պայմաններում դիմել վերադաս կամ ոստիկանության հարակից ստորաբաժանումների հերթապահ մասերին՝ ուժերով և միջոցներով օգնություն, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար:

28. Վերադաս հերթապահ մասի ավագ տեսուչ-հերթապահը լրիվ չափով օգտվում է սույն կարգի 27-րդ կետում նշված լիազորություններից՝ կարգով սահմանված այլ գործառույթներից և պարտականություններից:

6. ԿՐՏՍԵՐ ՏԵՍՈՒՉ-ՀԵՐԹԱՊԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

29. Կրտսեր տեսուչ-հերթապահը լիազորված է.

1) կատարել ստորաբաժանման ղեկավարության հանձնարարությունները,

2) ապահովել մշտական կապ դեպքի վայր մեկնած օպերատիվ խմբի անդամների հետ, նրանցից ստանալ տեղեկություններ դեպքի վայրում կատարված աշխատանքի ընթացքի և արդյունքների մասին և զեկուցել ստորաբաժանման ղեկավարին,

3) ծառայությունների և ստորաբաժանումների ղեկավարներից ու ծառայողներից ստանալ հերթապահ մասի աշխատանքի հետ կապված առաջադրանքներ և կատարել դրանք,

4) ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից կամ ներգերատեսչական համակարգչային ցանցով ավտոմատացված տեղեկատվական համակարգից ստանալ հանցագործությունների բացահայտման և հետախուզման աշխատանքների համար անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական ու տեղեկատվական տվյալներ,

5) օգտվել սույն կարգով սահմանված այլ գործառույթներից և պարտականություններից:

7. ՀԵՐԹԱՊԱՀԻ ՕԳՆԱԿԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

30. Հերթապահի օգնականը լիազորված է.

1) կատարել ավագ տեսուչ-հերթապահի հանձնարարությունները,

2) ավագ տեսուչ-հերթապահի բացակայության դեպքում փոխարինել նրան,

3) ՁՊՎ ոստիկանի հանգստի և սննդի ընդունման ժամերին, ինչպես նաև վերջինիս կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքերում փոխարինել նրան,

4) օպերատիվ իրադրության բարդացման դեպքում զեկուցել ավագ տեսուչ-հերթապահին, իսկ նրա բացակայության դեպքում՝ օպերատիվ խմբի ղեկավարին և ստորաբաժանման պետին,

5) ապահովել մշտական կապ դեպքի վայրի պահպանության, «տաք հետքերով» հանցագործներին հետապնդելու և ձերբակալելու նպատակով սպասարկվող վարչական տարածքում գտնվող ոստիկանության այլ ուժերի հետ,

6) օպերատիվ խմբի անդամներից ստանալ տեղեկություններ դեպքի վայրում կատարված աշխատանքի ընթացքի և արդյունքների մասին,

7) ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից կամ ներգերատեսչական համակարգչային ցանցով ավտոմատացված տեղեկատվական համակարգից ստանալ հանցագործությունների բացահայտման և հանցագործների հետախուզման աշխատանքների համար անհրաժեշտ օպերատիվ և տեղեկատվական տվյալներ,

8) ծառայությունների և ստորաբաժանումների ղեկավարներից ու ծառայողներից ստանալ հերթապահ մասի վրա դրված խնդիրների կատարման համար անհրաժեշտ տեղեկատվություն և այն փոխանցել ավագ տեսուչ-հերթապահին,

9) օգտվել սույն կարգով սահմանված այլ գործառույթներից և պարտականություններից:

8. ՁՊՎ ՈՍՏԻԿԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

31. ՁՊՎ ոստիկանը լիազորված է.

1) Իր գործունեության ընթացքում ղեկավարվել ձերբակալված և կալանավորված անձանց պահման հետ կապված հարաբերությունները կանոնակարգող օրենսդրությամբ,

2) ապահովել ՁՊՎ-ում պահվող անձանց «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված իրավունքների իրականացումը և պարտականությունների կատարումը, հերթափոխն ընդունելիս ստուգել

ՁՊՎ-ում պահվող անձանց առկայությունը՝ ըստ գրանցամատյանի, ՁՊՎ խցերի վիճակը, կապի, ազդանշանային և այլ սարքավորումների սարքինությունը,

3) համաձայն ՁՊՎ-ների ներքին կանոնակարգի՝ ապահովել ՁՊՎ-ում պահվող անձանց կողմից ներքին կարգացուցակի պահպանումը,

4) ծառայության ընթացքում մշտապես հետևել ՁՊՎ-ում պահվող անձանց վարքագծին, այդ թվում՝ կանխել վերջիններիս կողմից հնարավոր հակաօրինական արարքների կատարումը, փախուստի փորձերը, ինչպես նաև ինքնավնասման և ինքնասպանության փորձերը,

5) ՁՊՎ-ների ներքին կանոնակարգի համաձայն իրականացնել ՁՊՎ-ում պահվող անձանց դուրսբերումը՝ ապացուցողական կամ վարույթային գործողությունների կատարման նպատակով,

6) ՁՊՎ-ում անկարգությունների, փախուստի, ինքնավնասման, կամ ինքնասպանության փորձերի և այլ արտակարգ պատահարների դեպքում անհապաղ միջոցներ ձեռնարկել դրանք կանխելու ուղղությամբ և զեկուցել հերթափոխի ավագին,

7) տիրապետել հրդեհաշիջման և առաջին բժշկական օգնություն ցուցաբերելու հնարքներին,

8) ՁՊՎ-ում արտակարգ իրավիճակ հայտարարելու դեպքում գործել ըստ ՁՊՎ-ների ներքին կանոնակարգի պահանջներով,

9) պահպանել ՁՊՎ-ում պահվող անձանց մեկուսացման կանոնները,

10) կատարել ավագ տեսուչ-հերթապահի հանձնարարությունները:

9. ՀԵՐԹԱՓՈԽԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

32. Օրվա հերթափոխը պարտավոր է լիակատար կերպով տիրապետել օպերատիվ իրավիճակին, անընդմեջ հավաքել, ընդհանրացնել և վերլուծել դրա փոփոխության վերաբերյալ տվյալները, այդ ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների մասին առաջարկություններ ներկայացնել ոստիկանության ստորաբաժանման պետին:

33. Հերթափոխը.

1) մշտապես կապ է պահպանում ստորաբաժանման կողմից սպասարկվող վարչական տարածքում ծառայություն իրականացնող ոստիկանության ուժերի հետ, նրանց է փոխանցում օպերատիվ իրադրության վերաբերյալ տեղեկատվությունը և ոստիկանության ստորաբաժանման պետի հանձնարարությունները,

2) տեղեկատվություն է փոխանակում ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի, այլ ստորաբաժանումների հերթապահ մասերի և վթարային, փրկարար, սանիտարահակահամաճարակային, օդերևութաբանական, ինկասացիոն, շտապ բժշկական օգնության և այլ ծառայությունների հետ,

3) իրադրության փոփոխության մասին տվյալներն արտացոլում է հերթապահի գրառումների մատյանում *(Ձև 4)*,

4) սահմանված կարգով վարում է հերթապահ մասի մատյանները և օպերատիվ իրավիճակի մասին տվյալները մուտքագրում է ավտոմատացված շտեմարան,

5) համապատասխան մատյաններում գրանցում է ստացված հաղորդումները:

34. Ըստ ստացված հաղորդումների և իրազեկումների օպերատիվ իրադրության մասին տվյալներ հավաքելու նպատակով հերթափոխը պետք է տիրապետի.

1) հերթապահության ընթացքում ստորաբաժանման կողմից սպասարկվող վարչական տարածքում ներգրավված ուժերի և միջոցների մասին տվյալներին,

2) հասարակական, քաղաքական, մարզական և կայանալիք այլ զանգվածային միջոցառումների մասին տեղեկություններին,

3) ծրագրված հատուկ տիպի օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումների անցկացման մասին տվյալներին,

4) հանցավոր խմբերի ձերբակալման և այլ խոշոր օպերատիվ-հետախուզական միջոցառումների մասին տեղեկություններին (գաղտնիության ռեժիմի պահպանումով):

10. ՀԵՐԹԱՓՈԽԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՏԱՔ ՀԵՏՔԵՐՈՎ» ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

35. Հանցագործությունների մասին հաղորդում ստանալու դեպքում, անկախ տարածքային ենթակայությունից, հերթափոխը պարտավոր է.

1) հնարավորինս լրիվ, ճշգրիտ և ամբողջական տեղեկատվություն ստանալ հանցագործության տեղի, ժամանակի, հանգամանքների, տուժածների վիճակի, ինչպես նաև հանցագործության վկաների և ականատեսների, այն կատարած անձանց ու նրանց զինվածության և հափշտակված իրերի արտաքին նշանների տվյալների մասին,

2) սահմանված կարգով գրանցել հաղորդումները,

3) ստորաբաժանման պետին զեկուցել գրանցված հաղորդման մասին,

4) անհապաղ, ոչ ուշ քան 10 րոպեի ընթացքում կազմակերպել օպերատիվ խմբերի, տվյալ տարածքն սպասարկող ոստիկանության ծառայողների, պարեկային ծառայության (ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի միջոցով) կարգախմբերի մեկնումը դեպքի վայր՝ հանցագործությունը կանխելու, խափանելու, «տաք հետքերով» բացահայտելու, այն կատարած անձանց ձերբակալելու, տուժածներին օգնություն ցույց տալու և այլ անհետաձգելի գործողություններ կատարելու համար,

5) հայտնաբերված հանցագործության մասին անհապաղ տեղեկացնել դատախազին և նախաքննության մարմնին,

6) կապ պահպանել դեպքի վայր ուղարկված ոստիկանության ծառայողների հետ, նրանցից մշտական տեղեկատվություն ստանալ օպերատիվ իրադրության մասին,

7) իրականացված անհետաձգելի միջոցառումների արդյունքների և ստացված տեղեկությունների մասին զեկուցել ստորաբաժանման պետին ու հայտնել ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն (օպերատիվ կառավարման կենտրոնի մարզային ստորաբաժանումներ):

36.Ոստիկանության այլ ստորաբաժանման կողմից սպասարկվող վարչական տարածքում կատարված դեպքի մասին հաղորդում ստանալիս ավագ տեսուչ-հերթապահը պարտավոր է.

1) հաղորդումն անմիջապես բանավոր կարգով հաղորդել տվյալ վարչական տարածքը սպասարկող ոստիկանության ստորաբաժանման հերթապահ մաս, իսկ պարեկային ծառայության կարգախումբ դեպքի վայր ուղարկելու անհրաժեշտության դեպքում՝ նաև ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն,

2) եթե հանցագործության, վարչական իրավախախտման կամ պատահարի վայրը զգալիորեն ավելի մոտ է հաղորդումը ստացած ստորաբաժանմանը, քան այն

ստորաբաժանմանը, որի սպասարկման տարածքում կատարվել է այն, կամ առկա է անհրաժեշտություն մինչև սպասարկող ստորաբաժանման օպերատիվ խմբի ժամանելը, տեղում ստուգելու, ապա ստորաբաժանման ղեկավարի ցուցումով այնտեղ ուղարկել օպերատիվ խումբ,

3) անկախ ստացման աղբյուրից, հաղորդումը գրանցել հանցագործությունների, վարչական իրավախախտումների և պատահարների մասին գրանցամատյանում՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 1495-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով:

11. ՀԵՐԹԱՓՈԽԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ-ՀԱՂՈՐԴՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

37. Հերթապահ մասի կապի միջոցներով հաղորդման համար հեռախոսագրեր ստանալու դեպքում հերթափոխը պարտավոր է ապահովել դրանց գրանցումը մտից հեռախոսագրերի հաշվառման մատյանում *(Ձև 3)* և հեռախոսագրերն անհապաղ հաղորդել հասցեատերերին: Բնագրի վրա կատարվում է դրանց հաղորդումն ու ստացումը հաստատող գրառում:

38. Ոստիկանության ստորաբաժանման հերթապահ մաս հեռախոսագրերի ստացման դեպքում ավագ տեսուչ-հերթապահը պարտավոր է.

1) ստացված հեռախոսագրերը գրանցել մտից հեռախոսագրերի հաշվառման մատյանում,

2) այլ ստորաբաժանումներ ուղարկվող հեռախոսագրերի վերաբերյալ գրառումները գրանցել ելից հեռախոսագրերի հաշվառման մատյանում *(Ձև* 2),

3) հեռախոսագրի մասին անմիջապես զեկուցել ստորաբաժանման պետին և կազմակերպել ստացված ցուցումների կատարումը, իսկ ստորաբաժանումների ղեկավարների բացակայության դեպքում, կողմնորոշման բովանդակությունն անմիջապես ծանոթացնել համապատասխան ծառայողներին,

4) 3 ժամը մեկ պարբերականությամբ ստուգել հերթապահ մասի համակարգչային ցանցին միացված տեղեկատվական բազաների թարմացումը, էլեկտրոնային փոստով ստացված փաստաթղթերը, որի վերաբերյալ զեկուցել ստորաբաժանման ղեկավարին կամ օրվա պատասխանատու ծառայողին,

5) հեռախոսագիրը ստորագրությամբ հանձնել կատարողին:

39. Ոչ աշխատանքային ժամերին կամ հանգստյան օրերին ստորաբաժանման թղթակցությունների ստացման դեպքում հերթափոխը պարտավոր է այն ընդունել, գրանցել ծրարների հաշվառման մատյանում (Ձև 5), ստուգել ծրարի ամբողջականությունը և կնիքների դրոշմվածքները, ստորագրել հանձնման ռեեստրում (ցրման գրքում կամ ցուցակում), այնուհետև հաջորդող աշխատանքային օրը հանձնել փաստաթղթաշրջանառության աշխատանքներ իրականացնող աշխատակցին:

40. «Գաղտնի», «Հույժ գաղտնի» գրառմամբ ծրարի վրա վնասվածքներ հայտնաբերելու դեպքում ծրարը բերողի ներկայությամբ կազմվում է արձանագրություն, որի մասին ռեեստրում (ցրման գրքում, ցուցակում) կատարվում է համապատասխան նշում: Այն դեպքում, երբ ծրարի վնասվածքը հնարավորություն է տալիս կարդալու նրանում պարունակված փաստաթղթի բովանդակությունը, զեկուցվում է ստորաբաժանման պետին:

41. Հերթափոխը պարտավոր է «Հավաք» ազդանշանի դեպքում ժամանակին

տեղեկացնել ոստիկանության ստորաբաժանման անձնակազմին՝ օգտվելով ծառայողներին տագնապով հավաքելու սխեմայից, մշտապես հսկել կանչի (ահազանգման) տեխնիկական միջոցների սարքինությունը, իմանալ ազդանշանով անձնակազմի հավաքատեղը, ինչպես նաև իշխանության և կառավարման մարմինների, կայազորի պետի, քաղաքացիական պաշտպանության շտաբի պետի հետ կապ հաստատելու կարգը՝ գրառում կատարելով հերթապահի գրառումների մատյանում:

42. Վերադաս հերթապահ մասից հատուկ ծրարների համապատասխան ազդանշանը և նշանաբանը ստանալու դեպքում հերթափոխի ավագը պարտավոր է.

1) հերթապահի գրառումների մատյանում նշել հատուկ ազդանշանի և նշանաբանի ստացման ճշգրիտ ժամանակը, դրանք հաղորդած անձանց ազգանունները, անվան և հայրանվան սկզբնատառերը,

2) վերադաս հերթապահ մասին հավաստիացնել դրանց ստացման մասին,

3) բացել ազդանշանի և նշանաբանի նշումով ծրարը, անմիջապես զեկուցել ստորաբաժանման պետին ստացված ազդանշանի մասին և գործել ստացված ցուցումին համապատասխան:

12. ՀԵՐԹԱՓՈԽԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՐԹԱՊԱՀ ՄԱՍ ԲԵՐՎԱԾ ԿԱՄ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼԻՍ

43. Ոստիկանության ծառայողների կողմից հերթապահ մաս բերված կամ ձերբակալված անձանց հետ հերթափոխի ավագն անցկացնում է պարզաբանում, որի ընթացքում պարտավոր է.

1) պարզել ձերբակալվածի կամ բերվածի անձը (ճշտել նրա անհատական տվյալները և ստուգել օպերատիվ փնտրողական քարտադարանով),

2) պարզել ձերբակալման կամ բերելու հիմքերը,

3) ձերբակալելու կամ բերելու փաստն արձանագրել ոստիկանության ստորաբաժանում բերված կամ ձերբակալված անձանց հաշվառման մատյանում *(Ձև 6)*,

4) ձերբակալվածի կամ բերվածի մոտ մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում դրանք արձանագրել ոստիկանության ստորաբաժանում բերված կամ ձերբակալված անձանց հաշվառման մատյանում, իսկ առողջության վերաբերյալ գանգատ հայտնելու դեպքում հրավիրել մասնագիտացված շտապ բժշկական օգնություն: Այս դեպքում հաշվառման մատյանում լրացվում է բժշկական օգնություն ցույց տալու ժամը և որպեն, ձեռնարկված բժշկական միջոցառումների բնույթը, ինչպես նաև օգնություն ցուցաբերելուց հետո անձի փաստացի առողջական վիճակի մասին տեղեկություններ: Այնուհետև մատյանի համապատասխան սյունակներում ստորագրում են հերթափոխի ավագը, բուժօգնություն ցույց տված անձը և ձերբակալված անձը (վերջինիս հրաժարվելու դեպքում մատյանում կատարվում է հրաժարման պատճառների վերաբերյալ նշում),

5) ենթադրյալ իրավախախտին ձերբակալած կամ ոստիկանության ստորաբաժանում բերած ծառայողից ընդունել զեկուցագիր՝ հատուկ ուշադրություն դարձնելով իրավախախտման հանգամանքների շարադրման, անձի ազատությունը սահմանափակելու հիմքերի և պատճառների, ինչպես նաև վայրի և ժամանակի վրա,

6) անձին ձերբակալելու կամ բերելու իրավական հիմքերի բացակայության դեպքում այդ մասին գրավոր զեկուցել ստորաբաժանման պետին կամ իրավասու տեղակալին, իսկ նրանց բացակայության դեպքում՝ օպերատիվ խմբի ղեկավարին՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:

44. Իրավախախտումների համար ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողներին բերելու կամ ձերբակալելու դեպքում հերթափոխի ավագը պարտավոր է բերելու կամ ձերբակալելու հիմքերը, ինչպես նաև զինծառայողի անձը և ծառայության վայրը ճշտելուց հետո հայտնել համապատասխան զինվորական մասի հրամանատարին և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության տարածքային ստորաբաժանում:

45. Հոգեկան կամ այլ հիվանդություններով տառապողներին, ինչպես նաև բերված կամ ձերբակալված անչափահասներին, որոնք ի վիճակի չեն տեղեկություն հայտնել իրենց մասին, հերթափոխի ավագը ստուգում է անհայտ կորած անձանց հաշվառումներով, այլ ստորաբաժանումներից ստացված շրջաբերական-կողմնորոշումներով և ապահովում նրանց տեղափոխումը համապատասխան հիմնարկություններ:

46. Դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձանց հերթապահ մաս ներկայացնելու (բերելու կամ ձերբակալելու) դեպքում հերթափոխի ավագը նրանց հետ պարզաբանում անցկացնելուց հետո անհապաղ հայտնում է ոստիկանության ստորաբաժանման պետին, ազատ արձակում, եթե բերելը կամ ձերբակալելը կապված չէ նրանց նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կատարման հետ:

47. Ոչ սթափ վիճակում, թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ազդեցության տակ գտնվող անձանց բերելու կամ ձերբակալելու դեպքում, հերթափոխի ավագը պարտավոր է կազմակերպել նրանց սթափության վիճակի և հոգեմետ նյութերի ազդեցության տակ գտնվելու հանգամանքը: Նման վիճակում գտնվող բերվածի կամ ձերբակալվածի հետ պարազաբանում անց է կացվում նրա սթափվելուց հետո, իսկ եթե բերված անձի պարագայում լրացել է օրենքով սահմանված 3 ժամը, իսկ ձերբակալված անձի պարագայում՝ 6 ժամը, սակայն վերջինս դեռևս չի սթափվել, ինքը այդ մասին զեկուցում է ստորաբաժանման ղեկավարին, և շտապ բժշկական օգնության միջոցով կազմակերպվում է նրա տեղափոխությունը մասնագիտացված բժշկական հաստատություն:

48. Բերված կամ ձերբակալված անձի կողմից ինքնասպանության փորձ կամ ինքնավնասում կատարելու դեպքում հերթափոխը ցուցաբերում է առաջին բուժօգնություն և հրավիրում շտապ բժշկական օգնություն:

49. Հերթապահ մասում բերված կամ ձերբակալված անձի հանկարծակի մահվան կամ ինքնասպանության դեպքում հերթափոխի ավագը պարտավոր է.

1) անհապաղ կանչել շտապ բժշկական օգնություն,

2) զեկուցել ստորաբաժանման ղեկավարին և վերադաս հերթապահ մաս,

3) տեղեկացնել դատախազին,

4) պահպանել դեպքի վայրը մինչև քննիչի ժամանումը:

50. Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալված անձի հետ պարզաբանում անցկացնելիս հերթափոխի ավագը պարտավոր է.

1) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կազմակերպել անձնական խուզարկության կատարումը, եթե մինչ այդ չի կատարվել, ինչպես նաև ձերբակալվածի լուսանկարումը և մատնադրոշմումը,

2) ձերբակալվածին ստուգել համապատասխան հաշվառումներով և կողմնորոշումներով,

3) միջոցներ ձեռնարկել անձի ձերբակալման մասին իրավասու դատախազին հայտնելու ուղղությամբ, եթե մինչ այդ չի հայտնվել,

4) արդյունքները զեկուցել օպերատիվ խմբի ղեկավարին, ըստ անհրաժեշտության ստորաբաժանման պետին և նրա ցուցումով կազմակերպել համապատասխան նյութերի ու ձերբակալվածի հանձնումը քննիչին,

5) քննիչից ձերբակալման մասին որոշումը ստանալուց հետո կազմակերպել ձերբակալվածի տեղափոխումը ՁՊՎ,

6) հերթապահ մասում ձերբակալվածի գտնվելու ողջ ընթացքում վերջինիս նկատմամբ ապահովել մշտական հսկողություն, որպեսզի բացառվի նրա փախուստը, ինքնավնասումը, այլ անձանց հետ շփումը կամ այլ հակաօրինական գործողությունները:

51. Վարչական իրավախախտման համար բերված անձի հետ պարզաբանում անցկացնելիս հերթափոխի ավագը պարտավոր է.

1) պարզել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործերի վարույթն առերևույթ բացառող հանգամանքների առկայությունը,

2) Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 263-րդ հոդվածով սահմանված կարգով կազմակերպել իրավախախտում կատարած անձի անձնական զննություն և իրերի զննություն,

3) բերվածին ստուգել համապատասխան հաշվառումներով և կողմնորոշումներով,

4) վարչական իրավախախտումների արձանագրությունը գրանցել վարչական իրավախախտումների վերաբերյալ նյութերի հաշվառման մատյանում *(Ձև 7)*,

5) արդյունքները զեկուցել օպերատիվ խմբի ղեկավարին, ըստ անհրաժեշտության՝ ստորաբաժանման պետին:

52. Բերվածից վերցված իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ համարվող իրերն ու փաստաթղթերը համապատասխան արձանագրության հետ միասին պահվում են հերթապահ մասի հատուկ պահարանում (զենքն ու ռազմամթերքը՝ հերթապահ մասի զինանոցի երկաթյա պահարանում), որի բանալիները գտնվում են հերթափոխի ավագի մոտ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ նյութերը հաշվառման մատյանում գրանցելուց հետո հերթափոխի ավագը դրանք, ինչպես նաև առգրավված իրերն ու փաստաթղթերը ստորագրությամբ հանձնում է վարույթն իրականացնող ծառայողին:

53. Այն դեպքում, երբ հերթապահ մասում գտնվում են վարչական իրավախախտում կատարած մի քանի անձինք և անմիջապես պարզաբանում անցկացնելը հնարավոր չէ, ապա այն կատարվում է բերելու հերթականությամբ:

13. ՀԵՐԹԱՓՈԽԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԵՐՎԱԾ ԿԱՄ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱՊԱՀ ՄԱՍԻ ԲԵՐՎԱԾ ԿԱՄ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀՄԱՆ ԽՑԵՐՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ՆՐԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ԱԶԱՏԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

54. Բերված կամ ձերբակալված անձանց խցերում ընդունելու հիմքերն են՝

1) Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 258-րդ, 259-րդ, 260-րդ և 261-րդ հոդվածներով սահմանված կարգով կազմված ոստիկանության ստորաբաժանում բերելու կամ վարչական կարգով ձերբակալման մասին արձանագրությունները,

2) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածով նախատեսված հիմքով անձին ձերբակալելու վերաբերյալ կազմված արձանագրությունը,

55. Օրվա հերթափոխը պարտավոր է ապահովել բերված կամ ձերբակալված անձանց՝ օրենսդրությամբ նախատեսված իրավունքների իրացումը և պահանջել դրանց ապահովումը ոստիկանության ծառայողների կողմից:

56. Բերված անձինք հերթապահ մասի պահման խցերում կարող են պահվել 3 ժամից ոչ ավել, իսկ ձերբակալվածները՝ 6 ժամից ոչ ավել:

57. Արգելվում է խցերում պահել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 432-րդ հոդվածով սահմանված դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձանց:

58. Հերթափոխը պարտավոր է մշտապես հետևել խցերում պահվող բերված կամ ձերբակալված անձանց վարքագծին:

59. Խցերում պահվող բերված կամ ձերբակալված անձինք սանիտարական մշակման չեն ենթարկվում, անկողնային պարագաներ նրանց չեն տրվում:

60. Բերված կամ ձերբակալված անձանց կողմից բնական կարիքները հոգալու պահանջով վերջիններիս դուրս բերումը խցից կատարվում է հերթով՝ ոստիկանության ծառայողի ուղեկցությամբ:

61. Բերված կամ ձերբակալված անձանց թույլատրվում է իրենց հետ ունենալ հագուստ, գլխարկ և սեզոնային կոշիկ (մեկ լրակազմ), թաշկինակ, պրոթեզ կամ հենակ (հաշմանդամներին), նրանք կարող են օգտվել դեղամիջոցներից (բժշկական ցուցման առկայության դեպքում): Բերված կամ ձերբակալված անձանց հայտարարությունները և շարժը գրանցվում է հերթապահ մասերի խցերում պահվող բերված կամ ձերբակալված անձանց հայտարարությունների և շարժի մատյանում *(Ձև 9)*: Պահվող անձի պահման կարգի խախտման վերաբերյալ հայտարարությունը ենթակա է ուսումնասիրման՝ մատյանը զննելու կամ անհրաժեշտության դեպքում բացատրություններ վերցնելու միջոցով, որի արդյունքների վերաբերյալ մատյանում կատարվում է համապատասխան նշում: Հերթապահ մասի խցերի ներսում՝ տեսանելի հատվածում փակցվում է բերված կամ ձերբակալված անձանց պահման խցերում պահվող անձանց իրավունքների մասին ծանուցումը *(Ձև 12)*:

62. Խցերում անձինք պահվում են մեկուսացման հետևյալ կանոնների պահպանմամբ.

1) տղամարդիկ՝ կանանցից առանձին,

2) անչափահասները՝ չափահասներից առանձին,

3) տարափոխիկ հիվանդություններով հիվանդ անձինք՝ մյուսներից առանձին,

4) միևնույն հանցագործության կատարման կասկածանքով ձերբակալված անձինք՝ միմյանցից առանձին:

63. Խցերում պահվող բերված կամ ձերբակալված անձանց ազատումը կատարվում է համաձայն ՀՀ քրեական դատավարության և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքերով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

64. Բերված կամ ձերբակալված անձանց ազատելիս հերթափոխի ավագը պարտավոր է.

1) համոզվել ազատվածի անձը պարզված լինելու մեջ,

2) ազատման մասին համապատասխան գրանցումներ կատարել ոստիկանության ստորաբաժանում բերված կամ ձերբակալված անձանց հաշվառման մատյանում,

3) բերված կամ ձերբակալված անձին վերադարձնել նրանից վերցված բոլոր իրերը, փաստաթղթերը, արժեքներն ու դրամը, բացառությամբ քաղաքացիական շրջանառությունից հանված, իրավախախտման գործիք կամ միջոց հանդիսացած կամ որոնման մեջ գտնվող առարկաներից կամ իրերից: Վերադարձված իրերի, փաստաթղթերի, արժեքների և դրամի ստացման համար ազատ արձակված անձը ստորագրում է ձերբակալման կամ բերման մասին արձանագրության մեջ,

4) եթե բերված կամ ձերբակալված անձն իրեն ազատելու պահին գանգատ է հայտնում իր առողջական վիճակի մասին, ապա նա հանձնվում է հարազատներին կամ հրավիրվում է շտապ բժշկական օգնության ծառայություն:

14. ՀԵՐԹԱՓՈԽԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԻՆ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾՆԵՐԻՆ ՁՊՎ-ՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱԶԱՏԵԼՈՒ, ՆՐԱՆՑ ՈՒՂԵԿՑՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

65. Հերթափոխի ավագը ՁՊՎ-ում ընդունում է (ազատում է) ձերբակալվածներին և կալանավորվածներին՝ ղեկավարվելով ՁՊՎ-ների ներքին կանոնակարգի պահանջներով:

66. Հերթափոխի ավագն իրականացնում է ձերբակալված և կալանավորված անձանց ուղեկցող կարգախմբերի օպերատիվ ղեկավարումը և այդ նպատակով նա պարտավոր է.

1) մասնակցել ուղեկցող կարգախմբի հրահանգավորմանը

2) ուղեկցող կարգախմբին ապահովել զենք-ռազմամթերքով, կապի և հատուկ միջոցներով,

3) ստուգել ուղեկցման համար նշանակված ծառայողների ծառայության կատարման պատրաստականությունը, ուղեկցման համար հատուկ տրանսպորտային միջոցի առկայությունը և ապահովել ուղեկցող կարգախմբի ժամանակին մեկնումն առաջադրված խնդիրները կատարելու համար,

4) իմանալ ուղեկցման հիմնական և պահեստային երթուղիները,

5) իմանալ ստորաբաժանման պետի որոշման մասին՝ ուղեկցող ծառայության կազմակերպման վերաբերյալ, ինչպես նաև տեղեկանալ ուղեկցման երթուղում օպերատիվ իրադրության մասին,

6) մշտապես կապ պահպանել ուղեկցող կարգախմբի հետ,

7) հետևել ծառայությունից հետո ուղեկցող կարգախմբի կողմից զենք-ռազմամթերքի և հատուկ միջոցների ժամանակին հանձնմանը:

67. ՁՊՎ-ում ձերբակալվածների և կալանավորվածների հուսալի պահպանությունն ապահովելու նպատակով՝ հերթափոխի ավագը պարտավոր է.

1) հերթապահության ընդունման-հանձնման ժամանակ պատերին, առաստաղին, հատակին փորվածք, ճեղք, լուսամուտների վանդակաճաղերի և փականների վնասվածքներ հայտնաբերելիս՝ ձերբակալվածներին և կալանավորվածներին տեղափոխել այլ խցեր և ուժեղացնել հսկողությունը նրանց վարքագծի նկատմամբ: Իրադրության և ձեռնարկված միջոցառումների մասին զեկուցել ստորաբաժանման ղեկավարներին, տեղեկացնել դատախազին,

2) կազմակերպել ՁՊՎ-ի հերթափոխի հանձնում-ընդունումը,

3) ստուգել ՁՊՎ վերակարգի կողմից ծառայության կատարումը և ՁՊՎ-ների ներքին կանոնակարգի պահանջների պահպանումը,

4) տիրապետել ՁՊՎ-ի տարհանման պլանին և վերակարգի ողջ կազմի պարտականություններին,

5) ՁՊՎ ընդունվող անձանց բուժզննության ենթարկելու համար հրավիրել շտապ բժշկական օգնության ծառայություն,

6) ՁՊՎ-ում գտնվող անձանց միջև վեճ (ծեծկռտուք) առաջանալու դեպքում՝ միջոցներ ձեռնարկել այն դադարեցնելու համար, պարզել հրահրողներին և նրանց տեղավորել տարբեր խցերում:

68. ՁՊՎ-ում արտակարգ իրավիճակ հայտարարվելու դեպքում՝ հերթափոխը գործում է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի և ՁՊՎ-ների ներքին կանոնակարգի պահանջների համապատասխան:

15. ՀԵՐԹԱՓՈԽԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

69. Հերթափոխն արտակարգ պատահարի մասին տեղեկություն ստանալու դեպքում, ուժերի և միջոցների օպերատիվ ղեկավարման նպատակով պարտավոր է.

1) այդ մասին անհապաղ զեկուցել ստորաբաժանման պետին, վերադաս հերթապահ մաս, ինչպես նաև տեղեկությունը փոխանցել ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն, փրկարար ծառայության տարածքային ստորաբաժանում, ազգային անվտանգության ծառայության տարածքային ստորաբաժանում և տեղական ինքնակառավարման մարմին,

2) հասարակական կարգի ապահովման, տուժածներին օգնելու, վթարային-փրկարարական աշխատանքներ կատարելու համար ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի միջոցով դեպքի վայր ուղարկել պարեկային ծառայության կարգախմբեր, կանչել վթարային ծառայություններ, շտապ բժշկական օգնություն, հրշեջ պահպանության ստորաբաժանումներ,

3) ղեկավարության ցուցումով գործողության մեջ դնել համապատասխան օպերատիվ պլանը, ազդանշանով հայտարարել ստորաբաժանման անձնակազմի հավաք:

70. Քրեակատարողական հիմնարկներից, զինվորական մասերից կամ այլ ստորաբաժանումներից հաղորդումներ ստանալիս մեղադրյալի, կալանավորի, դատապարտյալի փախուստի կամ զինծառայողի դասալքության մասին հերթափոխը՝

1) փախուստի դիմած անձանց հետախուզման ուղղությամբ կողմնորոշում է համապատասխան ստորաբաժանումներին, ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն, ինչպես նաև այն ստորաբաժանումների հերթապահ մասերին, որոնց սպասարկման տարածքներում կարող են հայտնվել փախուստի մեջ գտնվողները,

2) անցկացված միջոցառումների արդյունքների մասին զեկուցում է ղեկավարությանը:

16. ՀԵՐԹԱՓՈԽԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՐԹԱՊԱՀ ՄԱՍԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ, ՌԱԶՄԱՄԹԵՐՔԻ, ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ, ԿԱՊԻ, ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

71. Սպառազինությունը (զենքը, ռազմամթերքը, հատուկ միջոցները, անհատական պաշտպանության և կապի միջոցները) պահվում են դրանց պահման համար նախատեսված հատուկ կահավորված սենյակում՝ անվտանգ պահպանությունն ապահովվող պայմաններում: Զենքի, ռազմամթերքի և հատուկ միջոցների պահելու և սպառազինության մաքրման համար առանձնացվում են հատուկ սենյակներ: Զենքի պահման սենյակի և պահարանների բանալիները պետք է գտնվեն հերթափոխի ավագի մոտ: Սենյակներն ու պահարանները կնքվում են պատասխանատու անձի կնիքով: Բանալիների պահեստային օրինակը հանձնվում է ստորաբաժանման պետին:

72. Հերթափոխը պարտավոր է ապահովել հերթապահ մասում գտնվող իրավական ակտերի, օպերատիվ պլանների և ծառայողական այլ փաստաթղթերի, հատուկ և կապի միջոցների, այլ գույքի պատշաճ պահպանությունը:

73. Հերթափոխը զենքի փոխարինման քարտով, ստորագրությամբ ոստիկանության ծառայողներին է հանձնում նրանց ամրակցված հաշվեցուցակային զենքը, ռազմամթերքը,

ինչպես նաև ոչ հաշվեցուցակային զենքը և ռազմամթերքը, անհատական պաշտպանության և հատուկ միջոցները՝ համապատասխան գրառում կատարելով «Զենքի և հատուկ միջոցների հանձնման և ընդունման» գրքում: Մինչև 24 ժամ ծառայություն իրականացնող ծառայողներին հաշվեցուցակային զենքը և ռազմամթերքը հանձնվում է միայն փոխարինման քարտով, առանց «Զենքի և հատուկ միջոցների հանձնման և ընդունման» գրքում գրառումներ կատարելու:

74. Սպառազինության միջոցների էլեկտրոնային հաշվառման և վերահսկման համակարգ ներդրվելուց ու գործարկվելուց հետո զենքի և ռազմամթերքի հանձնումն ու ընդունումն իրականացվում է նշված համակարգով:

75. Ծառայողներից զենքի, ռազմամթերքի, հատուկ միջոցների, կապի և պաշտպանության միջոցների ընդունման դեպքում հերթափոխը համեմատում է դրանց համարներն ու քանակները, որից հետո ստացման մասին, հանձնողի ներկայությամբ, ստորագրում է համապատասխան գրքում:

76. Զենքի, ռազմամթերքի, կապի միջոցների և այլ առարկաների հանձնումը ձգձգելու, ինչպես նաև դրանց մեխանիկական վնասման և կորստի դեպքում հերթափոխի ավագը գրավոր զեկուցում է ստորաբաժանման պետին ու գործում նրա ցուցումով:

77. Հերթափոխի կողմից ժամանակավոր պահպանության է ընդունվում նաև թույլտվությունն ուժը կորցրած ճանաչված՝ սեփականության իրավունքով քաղաքացիներին պատկանող զենքը, 180 օր և ավել Հայաստանի Հանրապետությունից բացակայելու մտադրություն ունեցող քաղաքացիների կողմից ոստիկանության տարածքային ստորաբաժանմանն ի պահ հանձնված զենքը, ՀՀ տարածքում գործուղման դեպքում՝ ժամանման վայրում զենքն անվտանգ պահելու հնարավորության բացակայության դեպքում գործուղված ծառայողի զենքը, առգրավված, կամավոր հանձնված, գտնված զենքն ու ռազմամթերքը, չպարզված պատկանելության գտնված, հանձնված առարկաներն ու իրերը, այդ թվում՝ տրանսպորտային միջոցները և ընտանի կենդանիները՝ համապատասխան գրառում կատարելով չպարզված պատկանելության գտնված, առգրավված, հանձնված առարկաների և իրերի հաշվառման մատյանում (*Ձև 8*):

17. ՀԵՐԹԱՓՈԽԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԵՎ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

78. Ոստիկանության ստորաբաժանման և ՁՊՎ-ի շենքերի պահպանությունը պատշաճ կերպով ապահովելու նպատակով հերթափոխի ավագը պարտավոր է.

1) տիրապետել շենքի և ՁՊՎ պաշտպանության պլանին, վարչական շինությունների տեղադիրին, անցագրային ռեժիմի կարգին,

2) գիշերային ժամերին փականով փակել շենքի բոլոր մուտքերը և ստուգել վարչական շենքի արտաքին շրջագծի լուսավորությամբ ապահովված լինելը,

3) գիշերը ոչ պակաս քան 2 անգամ ստուգել ՁՊՎ-ի ոստիկանի կողմից ծառայության կատարումը, ազդանշանային համակարգերի և կապի միջոցների սարքինությունը: Ծառայության կարգի խախտման, տեխնիկական միջոցների անսարքության հայտնաբերման դեպքում միջոցներ ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ,

4) ոչ աշխատանքային ժամերին և օրերին հերթափոխի ուժերով կազմակերպել ստորաբաժանման վարչական շենքի հարկաբաժինների և արտաքին շրջագծի մշտական

դիտարկումը տեսադիտարկման համակարգով կամ եթե առկա է 2-րդ ծառայողը՝ շրջայցի միջոցով,

5) հերթափոխը պարտավոր է թույլ չտալ հերթապահ մասի տարածք ոչ ծառայողական նպատակով այլ ծառայողների մուտքը և այնտեղ գտնվելը,

6) շենքի կամ ՁՊՎ-ի վրա զինված հարձակման դեպքում հայտարարել տագնապ, համապատասխան պլանի համաձայն կազմակերպել դրանց պաշտպանությունը, անմիջապես զեկուցել ղեկավարությանը և վերադաս հերթապահ մաս, միջոցներ ձեռնարկել հարձակվողներին բռնելու և վնասազերծելու ուղղությամբ: Ձեռնարկված միջոցառումների մասին ներկայացնել զեկուցագիր:

18. ՀԵՐԹԱՓՈԽԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔՈՒՄ ՀՐՇԵՋ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

79. Ստորաբաժանման վարչական շենքում հրշեջ անվտանգության և սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման նպատակով հերթափոխը պարտավոր է.

1) տիրապետել հրդեհաշիջման միջոցներից օգտվելու կարգին, հրդեհի դեպքում մարդկանց և գույքի տարհանման պլանին, ստորաբաժանման շենքի էլեկտրաէներգիայի, գազի և ջրամատակարարման վթարային անջատման համակարգին, ինչպես նաև վթարային և փրկարար ծառայությունների հետ կապի եղանակներին,

2) պահանջել շենքում և նրան հարող տարածքում գտնվող ծառայողներից և քաղաքացիներից խստորեն պահպանելու հրշեջ անվտանգության և սանիտարահիգիենիկ կանոնները,

3) թույլ չտալ դյուրավառ հեղուկների և պայթուցիկ ու թունավոր նյութերի պահպանումը ստորաբաժանման վարչական շենքում,

4) ունենալ վարչական շենքի սենյակների բանալիների կրկնօրինակները,

5) էլեկտրական և գազի սարքերի, ջեռուցման համակարգի և ջրամատակարարման անսարքություն հայտնաբերելու դեպքում անմիջապես հրավիրել համապատասխան մասնագետներ՝ դրանք վերացնելու համար,

6) հրդեհի (վթարի) դեպքում անհապաղ կանչել փրկարար և վթարային ծառայություններ, մինչև նրանց ժամանելը շենքում հրդեհի (վթարի) դեպքում գործողությունների հաստատված պլանի համաձայն միջոցներ ձեռնարկել դրանք վերացնելու, մարդկանց, նյութական արժեքները և այլ գույքը ժամանակին տարհանելու ուղղությամբ,

7) հրդեհի (վթարի) մասին անհապաղ հաղորդել վերադաս հերթապահ մաս:

19. ՀԵՐԹԱՊԱՀ ՄԱՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

80. Հերթապահ մասի գործունեության ղեկավարում իրականացնում է ոստիկանության ստորաբաժանման պետը կամ իրավասու տեղակալը:

81. Գործունեության ղեկավարման շրջանակներում ոստիկանության ստորաբաժանման պետը կամ նրա հանձնարարությամբ իրավասու տեղակալը.

1) յուրաքանչյուր օր ստուգում է ծառայության անցնող հերթափոխի կողմից ծառայողական խնդիրների կատարման պատրաստականությունը, հրահանգավորում է օպերատիվ խմբին և գնահատում նախորդ հերթափոխի ծառայությունը,

2) յուրաքանչյուր օր, անձամբ կամ օպերատիվ խմբի ղեկավարի միջոցով, ստուգում է հերթապահ մասի ծառայողական սենյակները, սպառազինության պահպանության,

անհատական պաշտպանության, կապի, քրեագիտական տեխնիկայի միջոցների սահմանված կարգով պահպանության ապահովումը, վերադաս հերթապահ մասին տեղեկություններ տալու կարգի պահպանումը, օպերատիվ կառավարման կենտրոն հաղորդվող ամփոփագրերի որակի ապահովումը, հերթափոխի ավագների կողմից տրված կարգադրությունների և ցուցումների կատարումը,

82. Ոստիկանության ստորաբաժանման պետի հանձնարարությամբ իրավասու ծառայողը՝ եռամսյակը մեկ անգամ կատարում է հերթապահ մասի գործունեության արդյունքների ամփոփում, արդյունքները զեկուցում պետին: Գործունեության արդյունքների ամփոփման վերաբերյալ հաշվետվությունը՝ կիսամյակը մեկ անգամ, մինչև հաջորդ ամսվա 10-ը, ներկայացնում է իրավասու վերադաս ստորաբաժանում *(Ձև 11)*:

20. ՀԵՐԹԱՊԱՀ ՄԱՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

83. Հերթապահ մասերի գործունեության նկատմամբ հսկողություն և մեթոդական ղեկավարում իրականացնում է ոստիկանության ՀՈԳՎ իրավասու կառուցվածքային ստորաբաժանումը, իսկ էլեկտրոնային գրանցամատյանի վարման և օպերատիվ հաղորդագրությունների մասով՝ նաև ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնը:

84. Վերադաս հերթապահ մասը կիսամյակը մեկ անգամ կատարում է հերթապահ մասի գործունեության արդյունքների ամփոփում և առաջարկություններ ներկայացնում իրավասու վերադաս ստորաբաժանում:

85. Հերթապահ մասի աշխատանքները ստուգող պաշտոնատար անձինք իրավունք ունեն լսելու հերթապահ մաս և հերթապահ ծառայություններ ուղղված հեռախոսազանգերի ձայնագրությունները:

86. Հսկողությունն իրականացվում է համապատասխան հանձնարարականներով և հաստատված պլան-առաջադրանքի համաձայն, որում կարող են ներառվել հետևյալ առաջադրանքները՝

1) հայտարարել անձնակազմի ուսումնավարժական հավաք,

2) ստուգել հերթափոխի և օպերատիվ խմբի ծառայողների առկայությունը,

3) ստուգել հերթափոխի ծառայողների կողմից իրենց պարտականությունների իմացությունը,

4) հերթափոխին տալ մտացածին առաջադրանքներ և իրականացնել մտացածին ահազանգերով հերթափոխի գործունեության ստուգում,

5) ստուգել հերթապահ մասի սպառազինության պահման սենյակում պահվող սպառազինության, ռազմամթերքի, հատուկ միջոցների, անհատական պաշտպանության միջոցների և այլ գույքի պահպանության վիճակը: Պլան առաջադրանքում կարող են ներառվել այլ առաջադրանքներ ևս,

87. Հերթապահ մասերի ծառայությունը իրավասու ստորաբաժանման պետի հանձնարարականով կարող է ստուգվել նաև անլուր եղանակով:

88. Հերթապահ մասերի գործունեությունը ստուգելիս արգելվում է.

1) իրականացնել հերթապահ մասերի վրա հարձակման իմիտացիա (ձևացում),

2) ստուգում իրականացնել հերթափոխի ծառայողների զենքը խլելու կամ այլ սադրիչ գործողությունների միջոցով,

3) ստուգման ընթացքում խանգարել հերթապահ մասերի բնականոն գործունեությունը և հերթափոխի ծառայողների կողմից իրենց գործառութային պարտականությունների կատարմանը:

Ձև 1

ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ

Մ Ա Տ Յ Ա Ն

_____

(ոստիկանության ստորաբաժանման անվանումը)

Սկսված է «____ » _____ 20 թ.

Ավարտված է «____ » _____ 20 թ.

Թերթերի քանակը _____

Պահպանման ժամկետը «____ » _____ 20 թ.

Հիմքը՝ հրաման _____ հոդ. _____

_____
(ոստիկանության ստորաբաժանման ղեկավարին)

_____
(կոչումը, ազգանունը և անվան, հայրանվան սկզբնատառերը)

ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

Զեկուցում եմ, որ հերթապահության ժամանակ «_____» _____ 20 թ. ժամը _____-ից մինչև «_____» _____ 20 թ. ժամը _____ - ը

Հանցագործությունների, վարչական իրավախախտումների և պատահարների մասին գրանցվել են ընդամենը ____ դիմումներ և ____ հաղորդումներ, որոնցից ____ բացահայտվել են «տաք հետքերով»:

ՁՊՎ-ում պահվել են ____ ձերբակալված և _____ կալանավորված անձ, որոնցից _____ ուղարկվել են ՔԿՀ, ____ ազատ են արձակվել, տեղի են ունեցել ____ արտակարգ պատահարներ, ՁՊՎ-ի ծառայությունը ստուգվել է _____ կողմից:

Բացի այդ _____
(այլ հանգամանքներ, որոնց մասին անհրաժեշտ է զեկուցել)

_____

_____

_____

_____

_____

_____

Օպերատիվ խմբի անդամներ _____

_____

_____

_____

_____

_____

Հերթապահությունը՝ հանձնեցի _____
(կոչումը, ազգանունը, ստորագրություն)

ընդունեցի _____
(կոչումը, ազգանունը, ստորագրություն)

«_____» _____20 թ.

Ստուգողների դիտողությունները և առաջարկությունները_____

_____

_____

_____

_____
(ստուգողի պաշտոնը, կոչումը, ազգանունը, ստորագրություն)

«_____» _____20 թ.

Ձև 2

ԵԼԻՑ ՀԵՌԱԽՈՍԱԳՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Մ Ա Տ Յ Ա Ն

_____

(ոստիկանության ստորաբաժանման անվանումը)

Սկսված է «____ » _____ 20 թ.

Ավարտված է «____ » _____ 20 թ.

Թերթերի քանակը _____

Պահպանման ժամկետը «____ » _____ 20 թ.

Հիմքը՝ հրաման _____ հոդ. _____

Հ/Հ	Հեռախոսագրի ուղարկման ամսաթիվը, ժամը և ընդհանուր	Ուղարկված հեռախոսագրի համարը	Ու՞ր է հաղորդվել հեռախոսագիրը: Ընդունողի ազգանունը, պաշտոնը, ստորաբաժանումը, մարմինը	Հեռախոսագրի համառոտ բովանդակությունը	Հեռախոսագիրը հաղորդողի պաշտոնը, ազգանունը	Ծանոթություն
1	2	3	4	5	6	7

ՄՏԻՑ ՀԵՌԱԽՈՍԱԳՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Մ Ա Տ Յ Ա Ն

_____

(ոստիկանության ստորաբաժանման անվանումը)

Սկսված է «____ » _____ 20 թ.

Ավարտված է «____ » _____ 20 թ.

Թերթերի քանակը _____

Պահպանման ժամկետը «____ » _____ 20 թ.

Հիմքը՝ հրաման _____ հոդ. _____

Հ/Հ	Հեռախոսագրի ստացման ամսաթիվը, ժամը և որպեսները	Ստացված հեռախոսագրի համարը	Որտեղի՞ց է ստացվել հեռախոսագիրը: Հաղորդողի ազգանունը, պաշտոնը	Հեռախոսագրի համառոտ բովանդակությունը	Հեռախոսագիրը ընդունողի պաշտոնը, ազգանունը	Կատարման համար ու՞մ է հանձնվել հեռախոսագիրը: Ստացողի ազգանունը, պաշտոնը, ստորագրությունը, ստացման ամսաթիվը, ժամը, որպեսները	Նշումներ կատարման վերաբերյալ
1	2	3	4	5	6	7	8

ՀԵՐԹԱՊԱՀԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻ

Մ Ա Տ Յ Ա Ն

_____

(ոստիկանության ստորաբաժանման անվանումը)

Սկսված է «____ » _____ 20 թ.

Ավարտված է «____ » _____ 20 թ.

Թերթերի քանակը _____

Պահպանման ժամկետը «____ » _____ 20 թ.

Հիմքը՝ հրաման _____ հոդ. _____

«_____» _____ 20 թ.

Հ/Հ	Ընդունված հաղորդման բովանդակությունը, ումից և երբ է ստացվել հաղորդումը կամ ցուցումը, ձեռնարկված միջոցները, ղեկավարության հանձնարարությունը

ԾՐԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Մ Ա Տ Յ Ա Ն

_____

(ոստիկանության ստորաբաժանման անվանումը)

Սկսված է «____ » _____ 20 թ.

Ավարտված է «____ » _____ 20 թ.

Թերթերի քանակը _____

Պահպանման ժամկետը «____ » _____ 20 թ.

Հիմքը՝ հրաման _____ հոդ. _____

Հ/Հ	Հանձնման ռեեստրի համարը և ամսաթիվը (ստացականի, ցրիչ մատյանի), ծրարների քանակը և հանձնման ամսաթիվը	Որտեղի՞ց է ստացվել	Ծրարների վրա նշված փաստաթղթերի համարները	Ստորագրություն ծրարների ստացման դիմաց, նշելով նրանց քանակը և ամսաթիվը	Փաստաթղթերի գրանցման ամսաթիվը, ելից համարը	Ո՞ր մտից կամ այլ գրանցման համարներով են հաշվառել փաստաթղթերը	Ծանոթություն
1	2	3	4	5	6	7	8

Ձև 6

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԲԵՐՎԱԾ ԿԱՄ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Մ Ա Տ Յ Ա Ն

_____

(ոստիկանության ստորաբաժանման անվանումը)

Սկսված է «____ » _____ 20 թ.

Ավարտված է «____ » _____ 20 թ.

Թերթերի քանակը _____

Պահպանման ժամկետը «____ » _____ 20 թ.

Հիմքը՝ հրաման _____ հոդ. _____

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը և վայրը	Հաշվառման և փաստացի բնակության հասցեն, անձը հաստատող փաստաթուղթը, սերիան, համարը, ե՞րբ և ու՞մ կողմից է տրվել	Աշխատանքի (ուսման) վայրը, զբաղեցրած պաշտոնը
1	2	3	4	5

Անձին ազատությունից փաստացի զրկելու տարին, ամիսը, օրը, ժամը, րոպեն, վայրը և հիմքերը	ՈՒ՞մ կողմից է ձերբակալվել (բերվել)	Հետաքննության մարմին բերելու ամսաթիվը, ժամը և րոպեն	Անձնական խուզարկության (զննության) արդյունքները	Ձերբակալվածի (բերվածի) նկատմամբ ձեռնարկված միջոցները կամ ու՞ր է ուղարկվել
6	7	8	9	10

Ազատ արձակման կամ ուղարկման ամսաթիվը, ժամը, որպեն	Ձերբակալվածի (բերվածի) վրա հայտնաբերված կամ վերջինիս կողմից հայտնված մարմնական վնասվածքները և առողջության վերաբերյալ գանգատները	Ձերբակալվածին (բերվածին) բուժօգնություն ցույց տալու ժամը և որպեն, ձեռնարկված բժշկական միջոցառումների բնույթը և բովանդակությունը, օգնության ցուցաբերումից հետո անձի փաստացի առողջական վիճակը	Բուժօգնությունից հրաժարվելու շարժառիթները	Բուժօգնություն ցույց տված անձի, հերթափոխի ավագի և ձերբակալվածի (բերվածի) ստորագրությունները
11	12	13	14	15

Ձև 7

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Մ Ա Տ Յ Ա Ն

_____

(ոստիկանության ստորաբաժանման անվանումը)

Սկսված է «____ » _____ 20 թ.

Ավարտված է «____ » _____ 20 թ.

Թերթերի քանակը _____

Պահպանման ժամկետը «____ » _____ 20 թ.

Հիմքը՝ հրաման _____ հոդ. _____

Հ/Հ	Վարչական իրավախախտման մասին հաղորդման կամ կազմված արձանագրության գրանցման համարը և ամսաթիվը	Իրավախախտման հակիրճ նկարագրությունը (ժամանակը, վայրը, հանգամանքները)	Ստուգում իրականացրած ոստիկանության ծառայողի պաշտոնը և անուն ազգանունը	Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթ հարուցելը մերժելու և հարուցված վարույթը կարճելու մասին կայացված որոշումն ընդունելու ամսաթիվը
1	2	3	4	5

Այն անձի Ա.Ա.Հ., ով ենթարկվել է վարչական պատասխանատվության կամ ում վերաբերյալ կայացվել է վարչական վարույթը կարճելու մասին որոշում	Որտեղ են ուղարկվել նյութերն ըստ ենթակայության (մարմնի անվանումը, ելքի համարը և ամսաթիվը)	Որոշում ընդունած ոստիկանության ստորաբաժանման պետի Ա.Ա. կամ դատական ակտի տվյալները	Կիրառված վարչական պատասխանատվու-թյան միջոցի տեսակը (գումարի չափը)	Նշումներ
6	**7**	**8**	**9**	**10**

ՉՊԱՐԶՎԱԾ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ԳՏՆՎԱԾ, ԱՌԳՐԱՎՎԱԾ, ՀԱՆՁՆՎԱԾ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԵՎ ԻՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Մ Ա Տ Յ Ա Ն

_____

(ոստիկանության ստորաբաժանման անվանումը)

Սկսված է «____» _____ 20 թ.

Ավարտված է «____» _____ 20 թ.

Թերթերի քանակը _____

Պահպանման ժամկետը «____» _____ 20 թ.

Հիմքը՝ հրաման _____ հոդ. _____

Հ/Հ	Տիրազուրկ գույքի կամ կենդանու հանձնման ամսաթիվը և հայտնաբերման, առգրավման հանգամանքները	Ո՞վ է հայտնաբերել, հանձնել կամ ու՞մից է առգրավվել: Ա.Ա.Հ., բնակության հասցեն	Առարկաների, արժեքների, տրանսպորտային միջոցների կամ ընտանի կենդանիների անվանումը, դրանց անհատական հատկանիշները	Տիրազուրկ, առգրավված գույքը կամ կենդանին ընդունող հերթապահի Ա.Ա.Հ.
1	2	3	4	5

Ստորաբաժանման պետի ցուցումը	Ստուգման նյութերը ստացած ծառայողի Ա.Ա.Հ., ստորագրությունը և ամսաթիվը	Անվանացանկի իրերն ու արժեքները հանձնվել են պահպանության, կենդանիները՝ պահման, որտեղ և ամսաթիվը	Իրերն ու արժեքները, կենդանիները հանձնվել են: Բեռնագրի հ/հ, ամսաթիվը, հանձնվել է տիրոջը Ա.Ա.Հ., հասցեն, ամսաթիվը, այն գործի համարը, որտեղ պահվում է բեռնագիրը, ստացականը	Ծանոթություն
6	7	8	9	10

ՀԵՐԹԱՊԱՀ ՄԱՍԵՐԻ ԽՑԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԲԵՐՎԱԾ ԿԱՄ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՇԱՐԺԻ

Մ Ա Տ Յ Ա Ն

_____

(ոստիկանության ստորաբաժանման անվանումը)

Սկսված է «____ » _____ 20 թ.

Ավարտված է «____ » _____ 20 թ.

Թերթերի քանակը _____

Պահպանման ժամկետը «____ » _____ 20 թ.

Հիմքը՝ հրաման _____ հոդ. _____

Հ/Հ	Պահվող անձի անունը, հայրանունը, ազգանունը	Խուց մուտք գործելու ամսաթիվը, ժամը և րոպեն	Դուրս բերման նպատակը	Դուրս բերման ամսաթիվը ժամը, րոպեն և տևողությունը	Դուրս բերող ոստիկանության ծառայողի անունը, ազգանունը	Ոստիկանության ծառայողի ստորագրությունը
1	2	3	4	5	6	7

Պահվող անձի՝ պահման կարգի խախտման վերաբերյալ հայտարարությունների բովանդակությունը	Հայտարարության ուսումնասիրման արդյունքները	Պահվող անձի ստորագրությունը
8	**9**	**10**

Ց Ա Ն Կ
ՀԵՐԹԱՊԱՀ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ, ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՔԱՐՏԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՈՒ ՆՅՈՒԹԵՐԻ

1. ՈՉ ԳԱՂՏՆԻ

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք,
2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենգիրք,
3. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք,
4. Հայաստանի Հանրապետության կառավարության 23.11.2017թ. «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» թիվ 1495-Ն որոշում,
5. Վարչական տարածքի քարտեզ:

2. ԳԱՂՏՆԻ

6. Հատուկ միջոցառումների պլաններ («Որոտ», «Հետապնդում», «Ավտոհետախուզում»),
7. Հատուկ ազդանշաններով գործողության մեջ դրվող պլաններ,
8. Ստորաբաժանման վարչական շենքի պաշտպանության պլան,
9. Ստորաբաժանման վարչական շենքի լուսաքողարկման պլան,
10. Ստորաբաժանման վարչական շենքից տարհանման պլան,
11. Քաղաքացիական պաշտպանության պլան,
12. Զանգվածային անկարգությունների խափանման «Հրաբուխ» հատուկ պլան,
13. Ստորաբաժանման անձնակազմի հավաքի սխեմա,
14. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ռադիոկապի ազդականչերի աղյուսակ:

3. ՀԵՐԹԱՊԱՀ ՄԱՍԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՐՔԵՐ, ՄԱՏՅԱՆՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

15. Հայաստանի Հանրապետության կառավարության 23.11.2017թ. «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» թիվ 1495-Ն որոշումով հաստատված՝ հանցագործությունների, վարչական իրավախախտումների և պատահարների մասին հաղորդումների գրանցամատյան,
16. Հերթապահության ընդունման և հանձնման մատյան,
17. Ելից հեռախոսագրերի հաշվառման մատյան,

18. Մտից հեռախոսագրերի հաշվառման մատյան,
19. Հերթապահի գրառումների մատյան,
20. Ծրարների հաշվառման մատյան,
21. Ոստիկանության ստորաբաժանում բերված կամ ձերբակալված անձանց հաշվառման մատյան,
22. Վարչական իրավախախտումների վերաբերյալ նյութերի հաշվառման մատյան,
23. Չպարզված պատկանելության գտնված, առգրավված, հանձնված առարկաների և իրերի հաշվառման մատյան,
24. Հերթապահ մասերի խցերում պահվող բերված կամ ձերբակալված անձանց հայտարարությունների և շարժի մատյան,
25. Զենքի և հատուկ միջոցների հանձնման և ընդունման գիրք,
26. Ձերբակալվածներին պահելու վայրերում վարվող մատյաններ և ձևաթղթեր՝ համաձայն ՀՀ կառավարության 05.06.2008թ. «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 574-Ն որոշման:

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՀԵՐԹԱՊԱՀ ՄԱՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Հերթապահ մասի աշխատանքի արդյունքների մասին կիսամյակային հաշվետվությունները հանդիսանում են դրանց գործունեության և նրա կատարելագործման ուղղությամբ միջոցառումների մշակման համար անհրաժեշտ տեղեկատվության աղբյուր:

2. Հաշվետվության տեքստային մասը շարադրվում է ազատ ոճով, պարունակում է հերթապահ մասի աշխատանքի համառոտ շարադրանքը՝ հերթապահ մասի գործունեության արդյունավետության ապահովմանը խանգարող օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների թվարկումով, ինչպես նաև օրենսդրական, գերատեսչական և միջգերատեսչական նորմատիվային կարգավորում պահանջող հարցերը:

3. Հաշվետվությանը կցվում է հերթապահ մասի կառուցվածքի, հաստիքների, նյութատեխնիկական ապահովության, տեղաբաշխման և աշխատանքի հիմնական արդյունքների մասին տեղեկությունների աղյուսակը:

(Աղյուսակ)

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

Ոստիկանության _____ հերթապահ մասի
Ստորաբաժանման անվանումը

վիճակի և գործունեության արդյունքների մասին

1	Հաստիքային թվաքանակը	Ավագ և միջին խմբի պաշտոններ	
		Կրտսեր խմբի պաշտոններ	
2	Թափուր հաստիքներ	Ավագ և միջին խմբի պաշտոններ	
		Կրտսեր խմբի պաշտոններ	
3	Հերթապահ մասի ավտոմեքենաներ	Ըստ հաշվեցուցակի	
		Փաստացի	
4	որից ենթակա են	Դուրս գրման	
		Հիմնական նորոգման	
5	Հերթապահ մասի ծառայողական շինությունների վիճակը	պահանջում են հիմնական նորոգում	
		պահանջում են նորոգում	
6	Ավտոմատացված տեղեկատվական համակարգի աշխատատեղերի քանակ		
7	Տեսադիտարկման համակարգեր		
8	Հերթապահ մաս բերված կամ ձերբակալված անձինք		
	Այդ թվում	Հանցագործություն կատարելու համար	
		Վարչական իրավախախտման համար	
9	Օպերատիվ կառավարման կենտրոն հաղորդվել են օպերատիվ հաղորդագրություններ		
11	Ընդունվել և հաղորդվել են հեռագրեր, հեռախոսագրեր	Մտից	
		Ելից	
12	Հերթապահ մասի ծառայողների մասնակցությամբ "տաք հետքերով" բացահայտվել են հանցագործություններ*		

13	Հերթապահ մասում տեղի են ունեցել արտակարգ պատահարներ*	
14	Ստացվել են բողոքներ հերթապահ մասի ծառայողների նկատմամբ (հաստատվել են)*	
15	Ենթարկվել են կարգապահական պատասխանատվության հերթապահ մասի ծառայողներ*	
16	Խրախուսվել են հերթապահ մասի ծառայողներ*	

***Ծանոթություն՝**

Աստղանիշով նշված բոլոր տողերում լրացված թվերի վերաբերյալ տեղեկությունները մանրամասն նկարագրել տեղեկանքի տեքստային մասում:

_____ _____ _____

Ստորաբաժանման պետի կոչումը, ստորագրությունը, անուն, ազգանունը

«____ » _____ 20 թ.

ՀԵՐԹԱՊԱՀ ՄԱՍԻ ԲԵՐՎԱԾ ԵՎ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀՄԱՆ ԽՑԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

- Ոստիկանության ծառայողներից պահանջել դուրս բերել խցից՝ բնական կարիքները հոգալու համար,
- Պահանջել խմելու ջուր,
- Ունենալ հագուստ, գլխարկ, կոշիկ և թաշկինակ,
- Բժշկական ցուցման առկայության դեպքում՝ օգտվել դեղամիջոցներից,
- Պահանջել, որպեսզի թույլ տան օգտվելու վերը նշված իրավունքներից՝ այդ մասին դիմելով ոստիկանության ծառայողին:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության ներքին
գործերի նախարարաության ոստիկանության
պետ-ներքին գործերի նախարարի տեղակալի
« 15 » 11. 202 թ.
Թիվ 20-Լ հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱՊԱՀ ՄԱՍԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. ՀԵՐԹԱՊԱՀ ՄԱՍԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՈՒՄԸ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) համայնքային ոստիկանության գլխավոր վարչության հերթապահ ծառայության վարչության հերթապահ մասը տեղակայվում է շենքի առաջին հարկում:

2. Ոստիկանության համայնքային ոստիկանության տարածքային բաժինների հերթապահ մասերը որպես կանոն, տեղակայվում են շենքերի առաջին հարկերում, հիմնական մուտքի նախասրահի հարևանությամբ:

3. Հերթապահ մասերի բոլոր պատուհանների վրա դրսի կողմից ամրացվում են մետաղյա ճաղավանդակներ, իսկ ներսի կողմից կահավորվում են մետաղյա շրջափականներով (փեղկերով):

4. Հերթապահ մասի մուտքի, սպառազինության սենյակի և զենքի մաքրման սենյակի դռները պատրաստվում են 6 մմ հաստությամբ պողպատից՝ 2 կողմից երեսպատելով փայտանյութով և կահավորվում հուսալի փականներով:

2. ՀԵՐԹԱՊԱՀ ՄԱՍԵՐԻ ՍԵՆՅԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

5. Հերթապահ մասերը պետք է ունենան՝

1) հերթապահության սրահ,

2) համակարգչային օպերատորների, քարտադարանի և ռադիոհանգույցի սենյակ (շենքային պայմաններից ելնելով սենյակի բացակայության դեպքում անհրաժեշտ քանակությամբ քարտադարանները, համակարգիչները և ռադիոտեխնիկան տեղադրվում են հերթապահության սրահում),

3) սպառազինության և հատուկ միջոցների պահման սենյակ,

4) զենքի մաքրման սենյակ,

5) կապի սարքավորումների սենյակ (շենքային պայմաններից ելնելով սենյակի բացակայության դեպքում սարքավորումները տեղադրվում են հերթապահության սրահում),

6) հանգստի սենյակ,

7) խոհանոց,

8) սանհանգույց,

9) բերված կամ ձերբակալված անձանց հետ պարզաբանումներ իրականացնելու սենյակ,

10) բերված կամ ձերբակալված անձանց պահման առնվազն 2 խուց:

6. ***Հերթապահության սրահը*** պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

1) հերթապահության սրահը նախատեսված է հերթափոխի աշխատանքի համար: Նրանում տեղադրվում են անհրաժեշտ քանակությամբ կապի կառավարակետեր և տեղեկատվության մշակման միջոցներ,

2) հերթապահության սրահը պետք է ունենա պատերի բավականաչափ մակերես, քարտեզներ և տեղեկատվության արտացոլման ու այլ միջոցներ փակցնելու համար և հնարավորություն ունենա ապահովելու հերթափոխի ավագի տեսողական կապը հերթապահների, ռադիոօպերատորների հետ, ինչպես նաև սպառազինության և հատուկ միջոցների պահման սենյակների դռների նկատմամբ,

3) հերթապահության սրահում տեղադրվում են հերթափոխի ավագի և հերթապահի օգնականի սեղանները, ռադիոօպերատորների սեղանները, աշխատանքային բազկաթոռներ, աթոռներ, երկաթյա պահարաններ, գրասենյակային պահարաններ,

4) հերթապահության սրահը մյուս սենյակների համեմատ պետք է այնպիսի տեղադիրք ունենա, որպեսզի նրա միջով ծառայողների շարժը լինի նվազագույն,

5) ոստիկանության տարածքային ստորաբաժանումների հերթապահ մասերը պետք է ունենան լայն ապակեպատ պատուհաններ, որոնց միջոցով հերթափոխը հնարավորություն ունենա լավ դիտարկել շենքի նախասրահը և հիմնական մուտքը,

6) հերթապահության սրահը պետք է ունենա բավարար լուսավորվածություն, օդափոխություն և հուսալի ձայնամեկուսացում,

7) հերթապահության սրահը պետք է կահավորվի համապատասխան տեխնիկայով (մոնիտոր), որը հնարավորություն կտա հերթափոխի ավագին տեղադրված տեսադիտարկման և խոսակցային սարքերի միջոցով հետևել և հսկել շարժը:

7. ***Համակարգչային օպերատորների, քարտադարանի և ռադիոհանգույցի սենյակը*** (այսուհետ՝ համակարգչային սենյակ) պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

1) համակարգչային սենյակում տեղադրվում են անհրաժեշտ քանակությամբ համակարգիչներ (ելնելով հերթափոխի մշակած հաղորդագրության ծավալից), քարտադարան, ֆաքսիմիլային կապի և պատճենահանման ապարատ, ռադիոհանգույց, գրասենյակային պահարան, մետաղյա պահարան, զգեստապահարան և աթոռներ,

2) համակարգչային սենյակը տեղակայվում է հերթապահության սրահի մոտ:

8. ***Սպառազինության պահման սենյակը*** (այսուհետ՝ սենյակ) պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

1) սենյակի տեղադիրքը պետք է ընտրել հերթապահության սրահի հարևանությամբ, սենյակի դուռը պետք է բացվի դեպի հերթապահության սրահ և գտնվի հերթափոխի ավագի մշտական հսկողության ներքո,

2) սենյակի պատերը կառուցվում են քարից և բետոնից 400 մմ-ից ոչ պակաս հաստությամբ, որոնց վրա պատուհաններ բացել չի թույլատրվում (բացառությամբ զենք ու ռազմամթերք տրամադրելու համար նախատեսված պատուհանից, որը դուրս է գալիս զենքի մաքրման սենյակ և պետք է ունենա 18x24 սմ չափ, երեսպատված լինի շերտավոր պողպատով, սենյակի կողմից ունենա հուսալի փական և հատակից բարձր լինի 110 սմ),

3) սենյակում տեղադրվում են մետաղյա պահարաններ, որտեղ պահվում են՝

ա. մարտական և ուսումնական ինքնաձիգներ, դիպուկահար և մարտական հրացաններ ու փամփուշտներ: Պահարանը սարքավորվում է զենքերը այնտեղ դնելու համար հարմար պահատեղերով: Յուրաքանչյուր պահատեղի վրա փակցվում է պիտակ՝ զենքի տեսակի և համարի, ինչպես նաև այն անձի ազգանվան, անվան և հայրանվան սկզբնատառերի նշումով, որին ամրակցված է զենքը,

բ. հաշվեցուցակային զենքեր և հատուկ միջոցներ: Ատրճանակների մարտական փամփուշտները պահվում են զենքի հետ միասին հատուկ կաղապարներում: Ռազմամթերքով պահարանները կնքվում են պատասխանատու անձի կնիքով,

գ. առգրավված, կամավոր հանձնված և գտնված զենքերը,

դ. որպես իրեղեն ապացույց ճանաչված զենքերը,

ե. ժամանակավոր պահման ընդունված զենքերը:

4) յուրաքանչյուր պահարանին փակցվում է պիտակ՝ պահարանի, այն կնքված կնիքի համարի և պատասխանատու անձանց ազգանունների նշումով,

5) յուրաքանչյուր պահարանի բաժիններում ներսի կողմից փակցվում են այնտեղ պահվող գույքի ցուցակները, իսկ ատրճանակների պահարանում նաև ծառայողներին ամրակցված ատրճանակների տեղեկագիրը,

6) Սենյակի պատին ամրացվում է ծառայողական փաստաթղթերի ցուցատախտակ, որի վրա փակցվում են՝

ա. սպառազինության ընդունման, հանձնման և հաշվառման կարգի մասին հրահանգը,

բ. զենքի և ռազմամթերքի հաշվառման փաստաթղթերի լրացման նմուշները,

գ. ծառայողների ցուցակը՝ նշելով նրանց ամրացված զենքերի համարները և այն պահելու տեղը,

դ. հանձնման-ընդունման ենթակա գույքի ցուցակը:

7) Սենյակը կահավորվում է հրշեջ անվտանգության, ահազանգման և օդափոխության համակարգերով:

9. ***Զենքի մաքրման սենյակը*** պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

1) զենքի մաքրման սենյակը պետք է լինի սպառազինության պահման սենյակի հարևանությամբ: Մուտքը նախատեսվում է հերթապահ մասի միջանցքից կամ նախասրահից, ներքին պատերը կառուցվում են քարից և բետոնից՝ 400 մմ հաստությամբ, իսկ արտաքին պատերին պատուհաններ չի թույլատրվում,

2) զենքի մաքրման սենյակում տեղադրվում են փամփուշտաորս արկղներ, մետաղյա արկղ՝ յուղման լաթերը և մաքրման հարմարանքները պահելու համար, քսուկով լցված փոքրիկ թիթեղյա աման, կրակմարիչ, զենքերի կառուցվածքի, հիմնական մասերի ու մեխանիզմների վերաբերյալ պաստառներ,

3) զենքի մաքրման սենյակում իրականացվում է մեխանիկական օդափոխություն:

10. ***Հանգստի սենյակը*** պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

1) հերթափոխի կարճատև հանգիստը կազմակերպելու համար հերթապահ մասում նախատեսվում է հանգստի սենյակ,

2) հանգստի սենյակում տեղադրվում են մահճակալներ՝ անկողնային պարագաներով, նրանց կից դարակներ, աթոռներ, զգեստապահարաններ, պահարան՝ անկողնու պարագաների համար,

3) կարճատև հանգստի համար անհրաժեշտ մահճակալների քանակը որոշվում է շուրջօրյա վերակարգի թվաքանակի կեսի հաշվով,

4) հանգստի սենյակը պետք է ունենա բնական լուսավորվածություն և ապահովվի օդափոխությամբ:

11. ***Խոհանոցը՝***

1) խոհանոցը նախատեսվում է ոստիկանության բոլոր հերթապահ մասերի համար,

2) խոհանոցում տեղադրվում են էլեկտրաջեռ, սառնարան, սեղաններ, աթոռներ և սպասքի պահարաններ:

12. ***Բերված կամ ծերբակալված անձանց պահման խցերը*** պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝

1) յուրաքանչյուր խուց պետք է ունենա 2 քառակուսի մետրից ոչ պակաս մակերես և իր կառուցվածքով ապահովի բերված անձի հուսալի մեկուսացումը,

2) պահման խցերը չպետք է ունենան արտաքին պատուհաններ և պետք է ապահովված լինեն մեխանիկական օդափոխության համակարգով,

3) խցերի դռները պետք է ունենան 1,9Х0,75 մ չափ, բացվեն դեպի հերթապահ մասի սրահ, պատրաստված լինեն թերթավոր պողպատից կամ պողպատաթիթեղով պատված փայտից՝ սարքավորված արտաքին սողնակով, թափանցիկ օրգանական ապակուց 0,5Х0,3 մ-ից ոչ պակաս չափի դիտանցքով,

4) խցերի պատերը սարքավորվում են քարից՝ 30 սմ-ից ոչ պակաս հաստությամբ, կամ 8-10 մմ տրամագծով պողպատյա ձողերից պատրաստված վանդակաճաղերով,

5) խցերում տեղադրվում են փայտյա կամ փայտեպատ երկաթյա նստարաններ, որոնք իրենց հիմքով ամուր կերպով ամրացվում են հատակին,

6) խցերում չպետք է լինեն այնպիսի առարկաներ, որոնք կարող են օգտագործվել ինքնավնասման կամ ոստիկանության ծառայողների վրա հարձակվելու համար,

7) խցերում ջեռուցման մարտկոցները պաշտպանվում են շերտավոր երկաթից պատրաստված պատյաններով կամ առանց սուր ելուստների ճաղավանդակներով: Էլեկտրալարերն անցկացվում են պատի միջով, լուսավորության էլեկտրալամպերը պաշտպանվում են մետաղյա ճաղավանդակներով,

8) խցերում անհրաժեշտ է պահպանել ոչ պակաս քան 18 աստիճան (ըստ ցելսիուսի սանդղակի) ջերմաստիճան: Օրվա մթնելուն պես, մինչև լիակատար լուսաբաց, միացվում է էլեկտրական լուսավորություն: